բանալի նորին մնալ 'ի ձեռս Հայոց, եւ դնել զմի դռնապան 'ի միաբանից նոցին, և երկաքանչիւր ազգաց մտանել յԱյրն 'ի սեփհական դրանց իւրեանց։ Իսկ արեւմտեան փակեալ դուռն մնալ 'ի ձեռս երկուց ազգաց իրաւամբ երից բաժնից · եւ այսպէս միաբանեալ սահմանեցին առաջի Բդեշխին, և դատաւորն գրով հաստատեաց զմիաբանութիւնս նոցա։

Եւ զկնի աւուրց ինչ առաքեաց Եղիազար վարդապետ զՅակոբ Թարգմանն առ դատաւորն առաքել զմի ոք 'ի պաշտօնէից իւրոց 'ի Բեթղեհէմ, պատրաստել զտեղի կանթեղացն եւ կախել զնոսա 'ի սահմանեալ տեղիս։ Եւ նա առաքեաց զդպրապետն գրեալ գիր առ ազգն Յունաց, չհակառակել Հայոց սակս որոշեալ իրաց, զորս սահմանեցին միաբանութեամբ։ Ուղեկից եղեն նմա քարտուղար Բդեշխին Իպրահիմ աղա, Պատրիարքն Յունաց՝ եւ Յովհաննէս եպիսկոպոս Հայոց, և զկնի բանից և քննութեան և պատրաստելոյ զտեղիս բեւեռաց՝ կախեցին զկանթեղս Հայոց այսպիսի եղանակաւ · 3 կանթեղ 'ի վերայ Ծննդեան տեղւոյն, դէմ յանդիման կանթեղացն Յունաց։ 5 կանթեղ 'ի վերայ Մսրոյ տեղւոյն։ 3 կանթեղ 'ի վերայ դրան Ծննդեան 'ի ձեղուանէ Այրին յանդիման կանթեղացն Յունաց։ 2 կանթեղ յանդէպ Ծննդեան տեղւոյն 'ի ձեղուանէ Այրին։ 3 կանթեղ 'ի ձեղուանէ հիւսիսային դրան Այրին՝ որ 'ի ձեռս Հայոց։ 2 կանթեղ 'ի վերայ հարաւային դրան՝ 'ի ձեռս Յունաց։ 3 կանթեղ յարեւմտեան յետին կողմն Այրին · բովանդակն 21 կանթեղ սեփհական ազգին Հայոց։

Յետ կատարելոյ նոցա զայս ամենայն, դարձ արարեալ անտի պատմեցին դատաւորին · եւ նա պատուիրեաց երկաքանչիւրոց չայլայլել զիրս ինչ, զի մնացեն իւրաքանչիւրքն 'ի տեղիս իւրեանց (1656)։

Յետ այսր ամենայնի Եղիազար որոնեալ եգիտ զԹագուցեալ դրամն 'ի Գրիգոր Պարոն Տէրէ, և դատարկեալ զանօթսն եդ 'ի նոսա դեղին և սպիտակ մոմ։ Զմասն ինչ 'ի դրամոց անտի եդ 'ի ծածուկ տեղւոջ յայլ իմն խորշ վանաց, իսկ զմնացեալսն սփռեաց յանկասկած տեղիս, և ինքն այնուհետեւ եդ 'ի մտի առնել շինութիւն 'ի վանս անդ և յայլ տեղիս · և ծախել զամենայն 'ի պէտս եկեղեց-